

# ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

(Կազմակերպված Սովետական Հայաստանի 30-ամյա հոբելյանի առթիվ)

*Հայ ժողովուրդը աննախընթաց խանդավառությամբ տոնեց իր Հայրենիքի ազատագրման 30-ամյակը։ Սովետական Հայաստանի մեր պարծանք մայրաքաղաքը, ամբողջ ամիս մը, մինչև ուշ գիշերներ, էլեկտրական լույսերու մեջ խայտաց երգ ու պարի ցնծության մեջ։ Երևանը, իր ընդարձակ տարածություններով մինչև իր նորաշեն բազմաթիվ ավանները, շողաց լուսավորության, դրոշակներու և ծաղիկներու մեջ։ Ալ ու կարմիր դրոշակներով զարդարվեցան մայրաքաղաքի նորակերտ պողոտաներ, երկարաձիգ փողոցներ, ֆապրիկաներ, գործարաններ, առողջապահական հաստատություններ, կուլտ-լուսավորության, արվեստի ու գիտության հազարավոր օջախներ ու տասնյակ հազարավոր բազմահարկ բնակելի շենքեր։*

*Ես կփափագիմ հակիրճ երկու խոսք ըսել ժողովրդական ստեղծագործության օլիմպիադայի և ժողովրդական ստեղծագործության ցուցահանդեսի մասին, որ կազմակերպված էր Սովետական Հայաստանի 30-ամյա հոբելյանի առթիվ։*

***

*Նոյեմբերի 12—19-ը, մայրաքաղաքի համերգային դահլիճներուն մեջ (Հայֆիլհարմոնիա և Օպերա), ցուցադրվեցան Երևանի, Լենինականի և Հայաստանի շրջաններուն մեջ Սովետական Հայաստանի 30-ամյա գեղարվեստական ինքնագործության ու ժողովրդական ստեղծագործության արվեստի նվաճումները։ Ութօրյա համերգներուն մասնակցեցան ծառայողներ, բանվորներ, կոլտնտեսականներ, ուսանողներ, միջնակարգ դպրոցներու աշակերտներ, երգեցիկ խումբեր, ժողովրդային երգի ու պարի, ժողովրդային գործիքներու անսամբլներ, երգիչներ, ինքնուս բանաստեղծներ և անհատ կատարողներ։*

*Նոյեմբերի 19-ին Ալ. Սպենդիարովի անվան օպերայի և բալետի թատրոնին մեջ տեղի ունեցավ օլիմպիադայի եզրափակիչ համերգը, որուն մասնակցեցին 2,800 հոգի։*

*Համերգը, որուն ծրագիրը բաղկացած էր երեք մասերե, սկսավ երեկոյան ժամը 8-ին և տևեց մինչև գիշերվա ժամը 2-ը։ Համերգին մասնակիցները, անհատ կամ խումբ, իրենց թարմ, ազատ ու անկաշկանդ արվեստով (երգ, պար, երաժշտություն, արտասանություն), եկան դարձյալ ապացուցելու՝ թե որքա՜ն բազմաթիվ են տաղանդները ժողովրդի ծոցին մեջ և ինչքա՜ն լայն հնարավորություններ կան մեզ մոտ անոնց դրսևորման համար։*

*Օլիմպիադային մեջ ելույթ ունեցողներուն մեկ մասը կոլխոզնիկներ էին, եկած Հայաստանի զանազան շրջաններեն, բերելով իրենց հետ իրենց շրջանին մեջ ստեղծված երգերն ու պարերը։ Հրաշալի էին Աշտարակի կուլտուրայի տան երգի-պարի անսամբլի, Կիրովականի և Էջմիածնի քառաձայն երգեցիկ խումբերու, աշուղներ՝ Աշոտի, Հավասիի և Շահենի ելույթները։ Պետք է ըսել, որ մեր գյուղացիներու մշակութային կյանքի մեջ զգալի փոփոխություններ են կատարված, մեր ժողովրդական երգերն այժմ ուրախ են, իսկ պարերն ավելի աշխույժ են քան առաջ։*

Օլիմպիադային մեջ հաջողությամբ հանդես եկան Աշխատանքային ռեզերվների վարչության կուլտուրայի տան երգի-պարի անսամբլը, Լենինականի միացյալ քառաձայն խումբը, Կիրովի անվան գործարանի երգի-պարի անսամբլը և Երևանի ուսուցիչների տան քառաձայն երգեցիկ խումբը։

***

Սովետական Հայաստանի 30-ամյա հոբելյանի առթիվ ժողովրդական ստեղծագործության տունը կազմակերպեց ժողովրդական ստեղծագործության ռեսպուբլիկական ցուցահանդես։ Ցուցահանդեսին հանդիսավոր

Ալ. Սպենդիարովի անվան օպերայի և բալետի Պետական թատրոնը

Առանձին անհատ կատարողներեն բուռն ծափերու արժանացան ուսանող Լևոն Ներսիսյանը՝ արտասանության համար, աշակերտուհի Մերսեդես Դարբինյանը՝ դարձյալ արտասանության համար, Մեղրիի շրջանի կոլտնտեսուհի Ֆինիկ Բոլյանը՝ երգի համար և ուրիշները։

Օլիմպիադայի վերջավորության ելույթ ունեցավ բոլոր քառաձայն երգեցիկ խումբերեն կազմված խումբը, բաղկացած մոտ հազար հոգիե, ղեկավարությամբ արվեստի վաստակավոր գործիչ կոմպոզիտոր Մարտին Մազմանյանի։

բացումը տեղի ունեցավ նոյեմբեր 20-ին։ Ժամը 12-ին, Աբովյան փողոցի Նկարիչների տան մեջ։ Ներկա էր հոծ բազմություն։

Ժողովրդական ստեղծագործության ցուցահանդեսին մասնակցեցան Ռեսպուբլիկայի 40 ինքնուս և ոչ պրոֆեսիոնալ նկարիչներ, քանդակագործներ, կիրառական արվեստի վարպետներ իրենց 400 գործերով։

Ցուցադրված 400 էքսպոնատները այցելուին պատկերեցին սովետական մարդու կերպարը, մեր հայրենի բնությունը, մեր վիթխարի շինարարությունը, մեր կոլխոզային բերքառատ դաշտերը, այգիները, մեր խաղաղ ու երջանիկ կյանքը, հայ արվեստի,

գրականության ու գիտության հայտնի հերոսներու դեմքերը և հայ ժողովրդի և Հայրենիքի ազատարար բարեկամներու դիմանկարները և քանդակները։

Կարժե հիշել այստեղ ցուցահանդեսին մասնակցող ինքնուս և ոչ պրոֆեսիոնալ արվեստագետներուն անունները իրենց գործերով, որոնք այցելուներուն գնահատության արժանացան։

Նկարիչներ՝ Ա. Բաբայանը իր «Ստալինը Քութայիսի բանտում» և «Ղուկաս Ղուկասյանի վերջին մարտը» նկարներով, Գ. Ոսկանյանը՝ «Դեպի յայլախ» նկարով, Ա. Վարդանյանը՝ «Շինարարություն» նկարով, Վարսենիկ Աղաջանյանը՝ «Կանացի գլուխներ» նկարով, Աղ. Մեսրոպյանը՝ «Կոմիտաս», «Տիգրան Չուխաջյան» և «Սևանի կղզին» նկարներով, Մ. Դատաստանյանը՝ «Սայաթ Նովա» դիմանկարով, Լ. Խաչատրյանը՝ «Նրանք ցանկանում են խաղաղություն» նկարով, Ա. Գրիգորյանը՝ «Պիոներական լագերում» նկարով և այլն։

Գրաֆիկայի գծով հաջող գործեր էին Խ. Հովհաննիսյանի՝ «Լենինի հրապարակը», «Օպերայի շենքը» և Հ. Հովհաննիսյանի «Ռաֆայել Խաչատրյանի դիմանկարը»։

Քանդակագործության գծով բարձրարվեստ գործեր էին Հ. Պողոսյանի քարե պատրաստած վազան և «Երջանիկ ընտանիքը», դարձյալ քարի վրա, և Բ. Հովհաննիսյանի «Արարատյան դաշտի աղջիկը» (գիպս)։

Արծաթագործ վարպետներու գործերեն աչքի կզարնեին Գ. Զարդարյանի «Երջանկություն» և «Հոբելյանական» վազաները և Վ. Հացագործյանի Հայրենիքի 30-ամյա նվաճումներն ամփոփող վազան՝ հյուսված ոսկի և արծաթ թելերով։

Ստեղծագործության նմուշներեն հավանության արժանացան Փառանձեմ Ավետիսյանի Կոմիտասի դիմանկարը, Ա. Պոտղյանի ծղոտե հյուսված արկղիկը։

Եվ վերջապես, գորգագործներեն շնորհալի աշխատանք ներկայացուցեր էին Անիկ Մատենյանը և Հ. Բապախյանը՝ ժողովուրդներու Առաջնորդ Մեծ Ստալինի նկարով։

***

Օլիմպիադայի համերգները և ժողովրդական ցուցահանդեսի բոլոր աշխատանքները պայծառ ապացույցը եղան Սովետական Հայաստանի 30 տարվա ընթացքին հայ ժողովրդի արվեստի մեջ ունեցած վիթխարի նվաճումներուն։ Համերգները մինչև ուշ գիշերներ վերածվեցան ժողովրդական տոնակատարություններու։ Սովետական հայ ժողովուրդը իր համերգներով, ժողովրդական ստեղծագործության արվեստի բազմաթիվ երանգներով արտահայտեց իր անհուն երախտագիտությունը, սերն ու անձնվիրությունը դեպի իր Սովետական Մեծ Հայրենիքը և անոր իմաստուն առաջնորդները։